**Կազմված է համայնքի ավագանու 100-Ա որոշմամբ Տպագրված է ընդամենը 2 օրինակից**

**Օրինակ 1**

**Բաղկացած է 10 թերթից**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
Արարատի մարզի Վեդի ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ «11» 02 2008թ.
համայնքի ավագանու գրանցման թիվը՝ N
51.210.00946
29.07.2022թ. թիվ 100-Ա որոշմամբ

Վեդի համայնքի ղեկավար՝ 11. 02.. 2008թ.
գրանցված կանոնադրության
______________Գ.Սարգսյան թիվ -----փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«—» ————— 2022թ.

________________ ______________

«ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# /Նոր խմբագրությամբ/

Ք.ՎԵԴԻ -2022թ.

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Վեդի համայնքի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

1.1 Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս համայնքի ղեկավարը:

1.2 Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Վեդի քաղաքի ավագանու 23.01.2008թ. թիվ 1 նիստի որոշման համաձայն, Վեդի համայնքի մշակույթի տուն բյուջետային հիմնարկի (գրանցված ՀՀ պետ.ռեգիստրում՝ 11.02.2008թ.. գր. համար 51.210.00946) վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

2.Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝կանոնադրություն):

3. Կազմակերպության գտնվելու վայրն է ք. Վեդի, Թումանյան 3:

4.Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5.Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Վեդի համայնքի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը.

2) հայերեն կրճատ՝ «Վեդի համայնքի մշակույթի տուն» ՀՈԱԿ.

6.Կազմակերպությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7.Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9.Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Կազմակերպությունը մշակութային հաստատություն է ստեղծված բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի արվեստի զանազան ճյուղերի մշակույթի և արհեստների պրոպագանդման, ուսուցման, զարգացման և կիրառման համար:

11.Նպատակներն են՝

11.1 Ստեղծել բարենպաստ պայմաններ իրագործելու բնակչության հանգստի,ինքնազարգացման,մշակույթի և արվեստի նվաճումներից օգտվելու, ստեղծագործական ազատության, հասարակական ակտիվության, ժողովրդական նախաձեռնության, ինքնագործունեության, տաղանդների և ընդունակությունների զարգացման, ինչպես նաև բնակչության տարբեր խմբերի բազմազան հետաքրքրությունների և հոգևոր պահանջմունքների բավարարման օժանդակ սիրողական միավորումների,ըստ հետաքրքրությունների ակումբների,կոլեկտիվների և խմբակների ստեղծմանը:

11.2 Ակտիվ աշխատանք տանել բնակչության գեղագիտական դաստիարակության հայկական և արտասահմանյան առաջադեմ գրականության և արվեստի լավագույն ստեղծագործությունների պրոպագանդայի, կուլտուրայի և արվեստի հետ լայն մասսաների հաղորդակցման գեղագիտական բարձր ճաշակի ձևավորման ուղղությամբ:

11.3 Զարգացնել մարդկանց ինքնագործ գեղագիտական և գիտատեխնիկական ստեղծագործությունները, նրա բոլոր տեսակներն ու ժանրերը, կատարելագործել մասնակիցների կատարողական վարպետությունը և ուսումնադաստիարակչական աշխատանքը' կոլեկտիվներում և խմբակներում:

11.4 Ստեղծել հնարավորություններ' բնակչության տարբեր խմբերի շփման և ազատ ժամանակի արդյունավետ անցկացման համար,զարգացնել սիրողական արվեստը:

11.5 Կազմակերպել ինքնագործ գեղարվեստական և գիտատեխնիկական ստեղծագործությունների մրցույթներ, ստուգատեսներ, մասսայական տոնահանդեսներ և փառատոներ, դիմակահանդեսներ, պարահանդեսներ, հանգստի և պարի երեկոներ, վիճակախաղ,վիկտորինա,դիսկոտեկներ,ատրակցիոններ, ինքնագործ և պրոֆեսիոնալ նկարիչների աշխատանքների ցուցահանդեսներ,ինքնագործ ինչպես նաև պայմանագրային կարգով պրֆեսիոնալ կոլեկտիվների համերգներ և ներկայացումներ,

հանդիպումներ պատերազմի վետերանների հետ:
11.6 Մասնակցել նոր տոների ու արարողությունների, նորածինների և ամուսնության հանդիսավոր գրանցումների, անձնագրերի հանձնման արարողությունների և զորահավաքների կազմակերպմանը:
11.7 Ձևավորել հայտագրեր, լոզունգներ, պլակատներ, վահանակներ և այլ բնույթի ցուցադրական ագիտացիա:
11.8 Ստեղծել հասարակական հիմունքներով թանգարաններ: Հիմնադրի թույլտվությամբ կարող է ունենալ գեղարվեստական ձևավորման արվեստանոցներ, վարձով տրվող սպորտային և կուլտ, գույքի, երաժշտական գործիքների, բեմական զգեստների և Թատերական ռեկվիզիտի, մշակութային աշխատանքների տեխնիկական միջոցների բազա, ինչպես նաև ստեղծել վճարովի խմբակներ և դասընթացներ՝ ինքնածախսածածկման սկզբունքով:
11.9 Կազմակերպությունը իրավունք ունի իրականացնել հիմնադրի կողմից որոշմամբ սահմանված և օրենքով նախատեսվող ձեռնարկատիրական գործունեություններ:

## 3.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

12. Կազմակերպության ուղղվածությունը, բովանդակության ձևերն ու մեթոդները արտահայտող գործունեության հիմանական սկբունքներն են
12.1 Կազմակերպությունը կոչված է կազմակերպելու մարդկանց ազատ ժամանակի հանրօգուտ, հոգեհարազատ գործունեությունը, ներգրավելու նրանց հասարակական ակտիվ կյանքի մեջ:
12.2 Կազմակերպության ուղղվածությունը, բովանդակության ձևերն ու մեթոդներն արտահայտող գործունեության հիմնական սկզբունքներն են՝
բնակչության տարբեր խմբերի հետ տարվող գաղափարադաստիարակչական, հասարակական, գաղափարաբարոյական և լուսավորչական աշխատանքները:
13.Կազմակերպության հիմնական ֆունկցիաներն են՝
13.1 Մարդկանց քաղաքացիական կուլտուրայի դաստիարակությունը, բնակչության աշխատանքային և հասարակական ակտիվության խթանումը:
13.2 Մասսաների լուսավորումը,նրանց հասարակական կարծիքի ձևավորումը,
13.3 Մասսաներին ծանոթացնելը հոգևոր ժառանգության հետ, ներգրավումը ստեղծագործական պրոցեսի մեջ, գեղարվեստական ինքնագործունեության զարգացումը, գրական, երաժշտական և բեմարվեստի տեսակների մատուցումը:
13.4 Բնակչության հանգստի և ազատ ժամանակի կազմակերպումը:
13.5 Հանրօգուտ, մասսայական և մշակութային

աշխատանքների նկատմամբ բոմպլեքսային մոտեցումը, կյանքի, տնտեսական, սոցիալական և կենցաղային խնդիրների լուծման հետնրասերտկապը, աշխատանքների գործող և նոր ձևերի ու մեթոդների անդադար կատարելագործումը:

## 4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Պետական գրանցման պահից կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

15. Կազմակերպությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բանկերում'հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

16. Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն հիմնադրի որոշմամբ:

17. Կազմակերպությունը իրավունք ունի ստեղծել (հիմնադիրի որոշմամբ) առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

18 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձիք չեն և գործում են կազմակերպության հաստատված նշանադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են կազմակերպության լիազորագրերի հիման վրա:

19. Կազմակերպությունը իրավունք ունի.

19.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով, ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացած եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը.

19.2 Հիմնադրի համաձայնությամբ կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողնել և տարածել արժեթղթեր.

19.3 Հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը.

19.4 մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության.

19.5 օտարել, վարձակալության տալ, փոխանակել,

օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ,լինել գրավառու և գրավատու.

19.6 օրենսդրությամբ սահմանված կարգով արտահայտել և ներմուծել գույքի օբյեկտներ գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցված ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ)ձեռնարկությունների.

19.7օգտվել օրենսդրության և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

19.8Կազմակերպությունը իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրանկատմամբ իր իրավունքները օտարել ,գրավ դնել ,հանձնել անհատույց օգտագործման:

19.9Կազմակերպությունը պարտավոր է.

20.Օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն.

20.1 աշխատանքային պայմանագրեր կնքել մշակույթի տան աշխատակիցների հետ.

20.2 պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար.

20.3 օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել մշակույթի տան սնանկացման մասին այն դեպքում,երբ հնարավոր չէ բավարարել պարտադիր օրինական գույքային պահանջները.

20.4 հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը.

20.5 ապահովել փաստաթղթերի (մշակույթի տան կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, մշակույթի տան ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի,Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը.

20.6 կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

## *5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ*

21.Կազմակերպության հիմնադիրն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և

պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

22. Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.

23. Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները.

24. Հիմնադիրը պարտավոր է

25. ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունը.
26. չհրապարակել մշակույթի տան գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները.
27. կատարել մշակույթի տան նկատմամբ ստանձնած պարտավորությունները.
28. պահպանել սույն կանոնադրության դրույթները:

## 6.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**29.** Կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր.

**29.1** Կազմակերպության հիմնադրի կողմից (հիմնադրման ժամանակ և հետագայում) սեփականության իրավունքով հնձնված գույքի

**29.2** Կազմակերպության ձեռքբերած գույքի.

**29.3** ստացված եկամուտների.

**29.4** վճարված ծառայություններից ստացված միջոցների (որոնք կարող են օգտագործվել բացառապես, որպես աշխատավարձ և կոմունալ ու տնտեսական այլ ծախսերի կատարման նպատակով):

**30.** Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

**31.** Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, ւրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը մշակույթի տան սեփականությունը պատկանելու հանգամանքի հետ,սահմանվում է միայն օրենքով:

**32.** Կազմակերպության հիմնադիրը մշակույթի տան սեփականության իրավուքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:

**33.** Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

**34.** Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

**35.** Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

36.Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական .կարգով:
37 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, տուրքերը և այլ պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը Կազմակերպությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների (Կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում հիմնական միջոցների ձեռք բերման ճանապարհով, Կազմակերպության աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում, գրականության ձեռքբերում, բրոշյուրների, գրքույկների, տեղեկագրերի հրապարակման կազմակերպում, պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ միջոցներով աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում, աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացների և այլն) իրականացման համար: Շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

## 7.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

38. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային կազմակերպության դեպքում), գործադիր մարմինը` հաստատության տնօրենը (այսուհետ` տնօրեն):
39. Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք` բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
40. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են`
40Կազմակերպության հիմնադրումը.
40.1 Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ)ամրացվող գույքի կազմի հաստատումը.
40.2 Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
40.3 Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.
40.4 Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.
40.5 Կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
41. Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերի: Տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումով, աշխատանքային պայմանագրով սույն Կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում

ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային Պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

42. Տնօրենի բացակայության դեպքում Հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է փոխտնօրենը:

43. Տնօրենն իր իրավասության սահմաններում՝

43.1 առանց լիազորագրի գործում է կազմակերպության անունից,ներկայացնում է նրա շահերը պետության,նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում.

43.2 տնօրինում է գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

43.3 կնքում է պայմանագրերը,այդ թվում աշխատանքային.

43.4 կազմակերպում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը

## 7.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

30. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: